ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 36-Լ «31» օգոստոս 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 33-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թ հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Նախարարության երիտասարդության հարցերի վարչության կանոնադրությունը՝ հանձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 33-Լ հրամանը:

8/31/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի օգոստոսի 31-ի N 36-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) Երիտասարդության հարցերի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Երիտասարդության հարցերի վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության նպատակներն են՝

1) ապահովել երիտասարդության հատվածի կանոնակարգման համար իրավական հենքի ստեղծումն ու շարունակական զարգացման բարելավումը:

2) ապահովել երիտասարդական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը:

3) ապահովել երիտասարդության ներուժի բացահայտման, իրացման և զարգացման, երիտասարդների լիարժեք ինքնադրսևորման, կայացման, երիտասարդության մասնակցության խթանման համար պայմանների ստեղծումը:

8. Վարչության խնդիրներն են՝

1) Հանրային կյանքին, այդ թվում՝ հասարակական, քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության ապահովումը:

2) Երիտասարդական նախաձեռնություններին պետական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

3) Երիտասարդության հատվածին առնչվող միջազգային երկկողմ և բազմակողմ ձևաչափով, ինչպես նաև համահայկական մակարդակով համագործակցության ապահովումը:

4) Երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների կարողությունների շարունակական զարգացումը և փոխգործակցության խթանումը, այդ թվում՝ միջմարզային և միջհամայնքային մակարդակներում:

5) երիտասարդների զբաղվածությանը, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, աշխատաշուկայում երիտասարդների ներուժի ներգրավմանն ուղղված աշխատանքների (այդ թվում՝ սոցիալական ձեռներեցության խրախուսման) համակարգումը:

6) Երիտասարդության հատվածը կարգավորուղ և սահմանող պետական կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական փաստաթղթերի և իրավակարգավորումների նախաձեռնումն ու ապահովումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է երիտասարդության առկա իրավիճակի, զարգացման նախադրյալների վերաբերյալ պարբերական ուսումնասիրությունների և վերլուծությունների կազմակերպումը,

2) մշակում է օրենսդրական և այլ իրավական ակտերի նախագծեր, ընդհանրացնում իրավական ակտերի գործնական կիրառումն ու ներկայացնում առաջարկություններ երիտասարդության հատվածին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

3) օրենքով սահմանված կարգով մասնակցում է երիտասարդության հատվածին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ինչպես նաև միջազգային պարտավորությունների կատարմանը, զարգացնում է երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցությունը,

4) մշակում և կիրառում է արդյունավետ մեխանիզմներ՝ երիտասարդների ներուժի բացահայտման, իրացման և զարգացման համար,

5) իրականացնում է երիտասարդների մասնակցային գործընթացների խթանմանը, հոգևոր-մշակութային, ազգային ինքնության զարգացման, իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,

6) աջակցում է երիտասարդական միջավայրի և հարթակների ստեղծմանը և դրանց շարունակական զարգացմանը,

7) սահմաններում մասնակցում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծերի մշակմանը,

8) իրականացնում է երիտասարդական պետական քաղաքականության իրազեկմանն ուղղված միջոցառումներ,

9) միջազգային երիտասարդական համագործակցության զարգացման նպատակով աջակցում է երիտասարդական խմբերի և անհատ երիատասարդների մասնակցությանը օտարերկրյա պետություններում տեղի ունեցող միջազգային միջոցառումներին,

10) համագործակցում է միջազգային կազմակերպությունների հետ և մասնակցում է միջազգային կառույցների հետ համատեղ աշխատանքներին,

11) աջակցում է երիտասարդական խմբերի ինքնակազմակերպմանը և որպես քաղաքացիական հասարակության սուբյեկտ՝ ինստիտուցիոնալացմանը, ինչպես նաև գործող երիտասարդական կազմակերպությունների և կառույցների կարողությունների զարգացմանը,

12) ուսումնասիրում է երիտասարդներին առնչվող և այլ ոլորտային քաղաքականություններից բխող ծրագրերն ու ծառայությունները,

13) քննարկում է քաղաքացիների նամակները (դիմումներն ու բողոքները), նպաստում դրանցում արծարծված հարցերի լուծմանը,

14) իրականցնում է պետական ֆինանսավորման երիտասարդական ծրագրերի մշտադիտարկումը,

15) մասնակցում է դրամաշնորհների տրամադրման և գնման հայտերի մշակման գործընթացին,

16) Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության ղեկավարը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության գործունեությունը կազմակերպում, համակարգում և ղեկավարում է Վարչության պետը:

12. Վարչության պետը, նրա տեղակալը և Վարչության աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

13. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի և Վարչության աշխատակիցների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14. Վարչությունը չունի կառուցվածքային ստորաբաժանումներ և բաղկացած է վարչության պետից, վարչության պետի տեղակալից և մասնագետներից: